ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2024 թվականի № 379-Ա

ԺՈՐԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ, 9-րդ մասերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գեղադիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի 2024 թվականի սեպտեմբերի 23-ի գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գեղադիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Ժորա Նահապետյանի***՝ վարժական հավաքներին 2024 թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 18-ը ներառյալ՝ 18 օր մասնակցելու պատճառով կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ֆիզիկայի ուսուցիչ ***Անդրանիկ Տոնիկյանի*** վրա:

2. ***Ժորա Նահապետյանի*** վարձատրությունը նշված ժամանակահատվածի համար իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է *2024 թվականի սեպտեմբերի 24-ից* ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի սեպտեմբերի 26
ք. Հրազդան